

ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԼԵԶՎԱԲԱՆՆ ՈՒ ՄԵԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ
(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Արսենի Աբրահամյանի
ծննդյան 90-ամյակին)

Աշոտ Աբրահամյանը բավականին շուտ է հեռացել կյանքից: Նա դեռ ծրագրած գիտական կարևոր անելիքներ ուներ, որոնցով կհարստացներ հայ լեզվաբանական միտքը: Ծնվել է 1918-ին Սևանի շրջանի Գեղամավան գյուղում: Ինչպես ինքն էր սիրում հպարտությամբ նշել, եղել է տոհմիկ հողագործի որդի: 1937 թ. ուսուցիչ, ապա ուսմասվար և դիրեկտոր է եղել Հրազդանի շրջանի դպրոցներում: Աշխատելուն զուգընթաց բարձրագույն կրթություն է ստացել Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում: 1948 թվականից բանասիրական



գիտությունների թեկնածու էր, իսկ 1963-ից՝ դոկտոր: 1950–59 թթ. պաշտոնավարել է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում իբրև ժամանակակից հայոց լեզվի բաժնի վարիչ, միաժամանակ դասավանդել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում ժամանակակից հայոց լեզու, գրաբար, լեզվաբանության ներածություն

առարկաները: Երկար տարիներ, մինչև իր անժամանակ և հանկարծակի մահը (1985 թ.), եղել է մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչը:

Ա. Աբրահամյանը բեղմնավոր լեզվաբան էր: Նրա գրաբարի ձեռնարկը, որը լույս տեսավ 1952-ին, հիանալի դասագիրք է բոլոր նրանց համար, ովքեր նպատակադրվել են սովորել ու յուրացնել մեր հնամենի լեզուն՝ գրաբարը: Այն մեծ տպաքանակով վերահրատարակվել է 4 անգամ և եղել է Հայաստանի բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողության սիրելի դասագիրքը, իսկ որոշ հայագետների՝ սեղանի գիրքը:

Ա. Աբրահամյանը հիանալի գիտեր ոչ միայն գրաբարը, այլև իր ուշադրության կենտրոնում էր պահում արդի հայերենը, որոնց նվիրել է երկու հիմնարար ուսումնասիրություններ՝ «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (1953) ու «Բայը ժամանակակից հայերենում» (հ. 1, 1963): Նրա բազմաթիվ հոդվածներում քննվել են հայերենի պատմական հնչյունաբանությունը և բառաբանությունը:

Ա. Աբրահամյանի մեծագույն ծառայությունը հայագիտությանը եղել և մնում է հայ միջնադարի երկու մեծարժեք մատյանների աշխարհաբար անթերի թարգմանությունը: 1971-ին լույս է տեսնում Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» նրա թարգմանությամբ, որին կցված են գիտական առաջաբան և հմուտ ծանոթագրություններ: Անվանի լեզվաբանն ընթերցողին մատուցել է գիտական թարգմանություն, որը V դարի հուշարձանի համարժեք տարբերակն է՝ XX դարի հայ լեզվամտածողական դրսևորմամբ: Թարգմանությունը կատարվել է համեմատական քննությամբ մինչ այդ եղած այլալեզու թարգմանությունների և դրանց կցված ծանոթագրությունների հետ: Ա. Աբրահամյանը ծանոթացել է գրադաշտական կրոնի հետ կապված գիտական գրականությանը, անտիկ շրջանի հույն փիլիսոփաների ուսմունքներին, Մխիթարյան հայրերի՝ Եզնիկ Կողբացու երկերին տրված մեկնություններին և արդյունքը ստացվել է գերազանց: Թարգմանության մեջ վարպետորեն է պահպանվել նաև Եզնիկի բնագրի բացառիկ հմայքը, հայ փիլիսոփայի կուռ տրամաբանությունը և վիճաբանելու բարձրագույն արվեստը:

Թարգմանական երկրորդ հուշարձանն առավել ծավալուն մատյան է. այն Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմության» դասական թարգմանությունն է: Այս երկը ներկայացնող առաջաբանում թարգմանիչը խոսում է այդ պատմության այլալեզու թարգմանությունների մասին: Օրբելյանի «Սյունիքի պատմությունն» առաջին անգամ թարգմանվել է լատիներեն (1717, Բեռլին): Նրա ֆրանսերեն թարգմանիչներն են եղել Սեն-Մարտենը և Մարի Բրոսսեն: Վերջինիս թարգմանությունը հենվում էր առավել քննախույզ ուսումնասիրության վրա և այս առումով երևույթ էր հայագիտության մեջ: Օրբելյանի երկը թարգմանվել է նաև ռուսերեն ու վրացերեն: Հայերեն աշխարհաբարը թարգմանվել է ահա այս բազմալեզու հրապարակումներից տարիներ անց և իրականացվել միջնադարյան մեծերի ու դասական բանասերների հատուկ խոստովանությունը հիշեցնող հետևյալ բացատրությամբ. «Գալով ներկա աշխարհաբար թարգմանության հանգամանքներին՝ պետք է խոստովանենք, որ շատ վաղուց, դեռ մեր ուսումնառության տարիներից, զարմանքով ու ափսոսանքով էինք զգում այս չափազանց արժեքավոր բնագրի թարգմանության բացը: Երջանիկ ենք, որ դրա վավերացումն ի վերջո բաժին ընկավ մեզ: Այն սիրով հանձն առանք և գլուխ բերեցինք ծանր աշխատանքով, ու, մանավանդ, շատ կարևոր ժամանակի ծախսումով: Հատուցումը կլինի այն, որ մեր օրերի հետաքրքրասեր ընթերցողը նրանից կօգտվի իրեն հասկանալի լեզվով»¹:

Թարգմանության ծանոթագրությունները, որոնք խիստ մանրատառ են, զբաղեցնում են գրքի 405–549 էջերը, թվաքանակով հասնում են 1778-ի: Դրանց հիմքում ընկած են գրքի այլալեզու թարգմանությունների հեղինակների բացատրությունները, որոնք թարգմանչի քննական հայացքի առաջ ընդունվում են, մերժվում, լրացվում, ճշգրտվում: Քանի որ հեղինակն ունեցել է հնարավորություն շրջագայելու Սյունիքի պատմական նահանգում, չի զլացել անձամբ այցելել պատմական հուշարձանները, սեփական աչքով տեսնել Ստեփանոս Օրբելյանի երկում պատ-

¹ Ս տ. Օ Ր Բ Է Լ Ե Ա ն. Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 61:

կերված տեղանքը, կարդալ արձանագրությունները, զգալ վաղնջական ժամանակների առարկայական շունչը:

Թարգմանության առաջաբանը հետազոտական առումով բաժանված է կարևոր ենթաբաժինների, որոնք պարզում են մատենագրական այդ գլուխգործոցի ստեղծման դրդապատճառները, սկզբնաղբյուրները, ժամանակային ընդգրկումն ու պատմագիտական արժեքը, երկի լեզուն ու ոճը, պատմագիտական մյուս երկերը:

Ա. Արրահամյանը խոստովանում է, թե Ստեփանոս Օրբելյանի մատենագրական այս գլուխգործոցը հետաքրքրական և արժեքավոր է նաև լեզվի ու ոճի կողմից, թերևս արժանի այս առումով մի ուրիշ, առանձին ուսումնասիրության: Մակայն, նկատի ունենալով տեղի սղությունը, նա կատարում է համառոտ քննություն: Պատմությունը գրված է գրաբարով, որի վրա երևում է պատմիչի ապրած ժամանակի կնիքը, և նրա մեջ ներմուծվել են աշխարհաբար բարբառային տարրեր:

Ա. Արրահամյանի այս խոստուն նկատումը վերստին հաստատում է, թե ամեն ազգի կենդանի լեզու «հոսանուտ է» ու ենթակա ժամանակի ներգործությանը: Նա բերում է պատմության բնագրային երկու տարբեր հատվածներ, որոնցից մեկը կանոնավոր գրաբար է, մյուսում երևում է աշխարհաբարի շունչը: Թարգմանիչը ուշադրություն է հրավիրում միջնադարյան հեղինակի կողմից նորակազմ բառերի գործածությանը. այս նորակերտումները զգալի թիվ են կազմում: Դրանցից են՝ աղիւսաքարտար, արբելութիւն, բոլորապոյր, բոցաթոյն, գետավարար, խակակիրթ, ծնրահանգոյց, ծովամատոյց, հրաշագիտակ, մեծանձնյա, մոմռանք, սովամածոյց, փարթամաբնակ, հաստատագիծ, անգրաւոր: Որոշ բառեր պատմիչն օգտագործել է մինչ այդ չօգտագործված իմաստով: Այդ բառերն են՝ պարարտութիւն, միագլուխ, գայլապատառ, թիթեղնակապ, կամարակապ և այլն:

Բարբառային ձևեր են գեղ (գիւղ), եղ (յուղ), կարմունջ (կամուրջ), դեն (կողմ), փրթուած (փլվածք), մատակ (մայր առու), մին (մեկ):

Նկատելի թիվ են կազմում օտար բառերը, որոնց գերակշիռ մասն անցել է հունարենից՝ աղաբողոն, անագանոս, արքեպիսկոպոս, դիակոն, եպիսկոպոս, կղերիկոս, հիւպատոս, մետրոպոլիտ, ողիմպիադ, ուրար, պենտեկոստէ, տրապեզ, փակեղն, քարտես, քորեպիսկոպոս և այլն:

Արաբական բառերից և իրանյան բառերից են՝ թաբուտ (թափուտ), խիլայել, խիսար (խսար), հալալ, հարամ, մէդան, շէխ (շէյխ), սուլտան (սուլթան), ջավահիր և այլն: Իրանական բառերից են՝ ամիրապասալար, դահեկան, դաւթար, թարխան, փեղամբար, փարման և այլն:

Կան մոնղոլ-թաթարական, թուրքական բառեր՝ ենչու (ինջու), մանղլայ, նոյին, դուման (թուման), ետոլէխ, դան, պասխադ, աթարէկ, բալիշ:

Փոխառություններ կան նաև ֆրանսերենից՝ բրինձ (prince), գոնթ (conte) և այլն: Կան նաև վրացերենից անցած մի քանի բառեր:

Ստեփանոս Օրբելյանի պատմության առանձին հատվածներ թարգմանված են գրաբարյան բնագրին համարժեք աշխարհաբարով, պահպանված է հին մտածողության ձևային կողմը, տեսանելի և հոգևոր հասկացությունները ներկայացնելու

ոչ սովորական ձևերը, պատմական անցքերը պատկերելու միջնադարյան մտածելակերպը, աստվածաշնչային ձևակերպումները:

Գեղարվեստորեն են թարգմանված երկուսն էլ եղած տեսիլներն ու հրաշքները ներկայացնող հատվածները, որոնցում անտեսված չեն եկեղեցական գրականության այդ տեսակների պոետիկայի առանձնահատկությունները:

Աշոտ Աբրահամյանը նաև մեծ մանկավարժ էր: Իր ողջ կյանքում նա դասավանդել է, ուրախացել ու հպարտացել լավագույն ուսանողների ու աշակերտների առաջադիմությանը: Ես եղել եմ նրա ուսանողը, նրանից եմ սովորել լեզվաբանության ներածության դասընթացը, ապա գրաբարը ոչ միայն բուհում, այլև ասպիրանտուրայում: Ա. Աբրահամյանը նվիրյալ էր մանկավարժությանը, նա խստապահանջ էր, հատկապես չէր ներում այն ուսանողներին, ովքեր ընդունակ էին. նա նրանցից պահանջում էր ավելին:

Ա. Աբրահամյանն օժտված էր բացառիկ հումորով, որը հատուկ էր միայն իրեն, սիրում էր կյանքը, Հայաստանը, ուրախանում հայ ժողովրդի ցանկացած հաջողությանը: Այս իրողությունների առհավատչյան ոչ միայն նրա քաղաքացիական, մարդկային ու մանկավարժական պահվածքն էր, այլև այն փաստերը, որոնք առկա են նրա օրագրության էջերում, նաև ոչ մասնագիտական հոդվածներում: 1987-ի մարտի 7-ին Երևանի մետրոպոլիտենի շահագործման առիթով իր օրագրում գրում է. «Ժողովրդիս համար մեծ տոն է: Բոլորս ցնծության մեջ ենք: Դրանով մեր սիրելի մայրաքաղաքը ոչ միայն էլ ավելի է շենանում, այլև ժամանակ ակից մեծ քաղաքի վկայական է ստանում, կանգնում է հռչակավոր քաղաքների կողքին մեկ գծի վրա»:

1981-ի ապրիլի 10-ին 1977-ից ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Աբրահամյանը, որն արդեն գիտության վաստակավոր գործիչ էր, գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտում հայ մատենագիրների համարաբար կազմելու աշխատանքները ղեկավարելու համար ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի ձեռքից ստանում է իր «Վաստակագիրը»: Նա հպարտ էր, որ այդ պարգևն իրեն անձամբ հանձնում է աշխարհահռչակ գիտնականը:

Տարբեր տարիների և տարբեր առիթներով Ա. Աբրահամյանը ուշագրավ հոդվածներ է նվիրել մեր արվեստի ու գրականության երևելի դեմքերին՝ Մարտիրոս Մարյանին, Առնո Բաբաջանյանին, Մուշեղ Գալշոյանին և ուրիշների:

Երիտասարդ տարիներին գրել է բանաստեղծություններ: Մշտապես հպարտ է եղել իր դուստրերով, գործընկերներով ու սաներով: Նրան որպես տաղանդավոր լեզվաբանի բարձր են գնահատել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Էդուարդ Աղայանը, Արարատ Ղարիբյանը, բանասիրության դոկտորներ Վաղարշակ Քոսյանը, Ալեքսանդր Մարգարյանը: Գրիգոր Նարեկացու Մատյանի գիտաքննական բնագրի հեղինակները՝ անվանի նարեկագիտագետներ Պողոս Խաչատրյանն ու Արշալույս Ղազինյանը, հատուկ խանդաղատանքով էին հիշում իրենց ասպիրանտական շրջանում գրաբարյան գանձերի մեջ խորանալը Աշոտ Աբրահամյանի ղեկավարությամբ:

1981 թ. մայիսի 19-ին Վիլյամ Մարոյանի մահվան առիթով Աշոտ Աբրահամյանն իր օրագրում գրում է. «Ճիշտ է, մեծ գրողը ընդհանուր մարդկությանը բաշ-

խեց իր հոգու անհուն հարստությունները, բայց ո՞ր գրականության պատմության մեջ պիտի մնա: Այո՛, այդպիսի մեծությունները պատկանում են հանուր մարդկությանը, բայց այս ընդհանրացումը, վերջիվերջո, վերացական բան է: Չկա վերացական համաշխարհային մեծություն: Յուրաքանչյուր համաշխարհային դեմք նախ և առաջ որևէ ազգի է պատկանում»:

Աշոտ Արրահամյանն ունի շատ աշակերտներ, որոնք իրենց ուժերի ներածին չափով նվիրված են մանկավարժությանն ու գիտությանը: Նրանք իրենց սրտում մշտապես պահելու են սիրելի ուսուցչապետի լուսավոր կերպարը, առաջնորդվելու են նրա պատգամներով, հպարտանալու են նրա գիտական մնայուն ժառանգությամբ, որը միջազգային հայագիտության մեջ ունի իր տեղը:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ